Հավելված

Արաքսավան համայնքի ավագանու

17 դեկտեմբերի 2020 թվականի

թիվ 33 -Ն որոշման

# Արաքսավան համայնքի 2021թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը

1.Տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հետևյալն են.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության

փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ------------------------ 1500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝-----------5500դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --------- 7500դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ---------10500դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ --------15000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝------- 25000դրամ.

բ.օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -----------------------1500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -------5500 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ------7500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -----10500դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝------ 15000դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ------25000դրամ.

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ -----175 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ.

9) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ 190 դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ 75 դրամ.

10) Արաքսավան համայնքի անվանում որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ.

11) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ:

1-ին կետով սահմանված դրույքաչափերը հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ:

2.Համայնքի տարածքում տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերն են.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել ----------------------------------------------------------------------------1000 դրամ:

2.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար սահմանել -------------------------2000 դրամ:

3.Շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ համայնքապետարանի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ---------------------------------------------------------------------5 000 դրամ:

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ ------------------------------------------------------------------------1000 դրամ:

5. Աղբահանության դիմաց վճար սահմանել.

- յուրաքանչյուր բնակչից ամսական 60 դրամ,

-կրթական, մշակութային, առողջապահական շինությունների 1քմ համար ամսական 3 դրամ,

-առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների 1քմ համար ամսական 50 դրամ,

-1 խմ աղբի աղբահանության դիմաց վճար 3000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Արաքսավան համայնքի ավագանու 17.12.2019 թ. թիվ 34 որոշման

# 2021Թ. ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ / ՀՀ դրամ / |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 270 000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 220 000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 198 000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 178 000 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Հարկահավաք | 1 | 150 000 |
| Օպերատոր | 1 | 115 000 |
| Խմելու ջրի պոմպակայանի հսկիչ | 0.5 | 45 500 |
| Հավաքարար | 0.5 | 45 500 |
| Անասնաբույժ | 0.5 | 50 000 |
| Աղբատար մեքենայի վարորդ | 1 | 90 000 |

Համայնքի ղեկավար՝ Ա. Թադևոսյան

Հավելված

Արաքսավան համայնքի ավագանու 17.12.2020թ. թիվ 35 որոշման

# ԱՐԱՔՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ

| ՀՀ | անվանում | քանակը | գինը | գումարը |
|---|---|---|---|---|
| 1. | Վարչական շենք | 1 | 7736107 | 7736107 |
| 2. | Երկաթյա պահարան | 1 | 0 | 0 |
| 3. | Մանկապարտեզի շենք | 1 | 4174070 | 4174070 |
| 4. | Սեյֆ | 2 | 0 | 0 |
| 5. | Ծառայողական ավտոմեքենա ԳԱԶ_3110՝ գազաբալոնային համակարգով | 1 | 1 | 0 |
| 6. | Հուշարձան խաչքար | 1 | 1018842 | 1018842 |
| 7. | Աթոռներ մետաղական | 20 | 1629 | 32586 |
| 8. | Գրասենյակային բազկաթոռ | 1 | 7943 | 7943 |
| 9. | Աթոռ կ/փ | 2 | 1527 | 3054 |
| 10. | Գրասեղան | 1 | 4277 | 4277 |
| 11. | Տնօրենի աշխատասեղան/աշխատանքային, դիմադիր,կողադիր սեղաններ, տումբա շարժ./ | կոմպ. | 17311 | 17311 |
| 12. | Canon LaserBase MP3110 /2011թ./ | 1 | 0 | 0 |
| 13. | Սառնարան LG-GR242MVF /2013թ./ | 1 | 22276 | 22276 |
| 14. | XEROX PHASER 3100 MFP /2013թ./ | 1 | 0 | 0 |
| 15. | Դաշնամուր | 1 | 0 | 0 |
| 16. | Համակարգիչ /2014/ | 1 | 0 | 0 |
| 17. | Օդափոխիչ GWH 12nb /2015թ./ | 1 | 91267 | 91267 |
| 18. | Համակարգիչ /2015թ./ | 1 | 0 | 0 |
| 19. | Փողոցների լուսավորություն /2015թ.,2016թ.,2017թ.,2019թ./ | 120 | 14691 | 1762920 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20. | Համակարգչային սարքավորումներ/թաս 60սմ,ցանցային սարք անլար ռոթեր TP-LINK TL WR740 N, Ubiquiti Nanonstation Loco M5GHz/, 2014թ. | 1 | 9892 | 9892 |
| 21. | WI-FI կապի սարք/2016թ./ | 1 | 49752 | 49752 |
| 22. | Համակարգիչ /2018թ./ | 1 | 149220 | 149220 |
| 23. | Զուգարանակոնք /2019թ./ | 1 | 45000 | 45000 |
| 24. | Ջրի բաք /2019թ./ | 1 | 54000 | 54000 |
| 25. | Շչակ /Ս-28/ | 1 | | |
| 26. | Շչակ /ԼԴ-800/ | 1 | | |
| 27. | Ասֆալտ | 2374 քմ | 10173 | 24151383 |
| 28. | Էլեկտրական եռաֆազ ջրահան պոմպ | 1 | 130000 | 130000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԹ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31**

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

ՀԱՍՏԱՏԵԼ ՕՐԱԿԱՐԳ.

1.ՀՀ ՏԶՀ ՋՏ ԾԻՄ-ի կողմից ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքի 10 տոկոս համաֆինանսավորման մասին:

2. Արաքսավան համայնքի 2021թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին:

3. Արաքսավան համայնքի ղեկավարի 2021թվականի աշխատավարձի չափի, Արաքսավանի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

4. Արաքսավան համայնքի սեփականություն հանդիսացող միջոցների 2020թվականի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին:

5. Արաքսավան համայնքի 2020թվականի բյուջեի փոփոխության մասին:

6. Համայնքի ղեկավարին և համայնքապետարանի աշխատակիցներին հավելավճար տալու մասին:

Կողմ -5　　　Դեմ -0　　　Ձեռնպահ -0

ՀԱՄԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 32**

### ՀՀ ՏԶՀ ՋՏ ԾԻՄ-ի ԿՈՂՄԻՑ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԵՔԻ 10 ՏՈԿՈՍԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով որ համայնքի ներտնտեսային ոռոգման ցանցի որոշակի հատված ներառված է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի կողմից իրականացվող Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրում

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

1. Տալ համաձայնություն մասնակցել համայնքի Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրին և կնքել Ծրագրում ներառված ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգնման շինարարական աշխատանքների արժեքի 10 /տասը/ տոկոսի համաֆինանսավորման պայմանագիր:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 33**

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14 -րդ հոդվածների պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Սահմանել Արաքսավան համայնքի 2021թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 34

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

1. Հաստատել Արաքսավան համայնքի ղեկավարի աշխատավարփի չափը՝ 270000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ դրամ:

2. Հաստատել Արաքսավանի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Արաքսավան համայնքի ավագանու 19.12.2019թվականի ,,Արաքսավան համայնքի ղեկավարի 2020թվականի աշխատավարձի չափի մասին,, թիվ 22 և 19.12.2019թվականի ,,Արաքսավանի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին,, թիվ 23 որոշումները:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՏԱՆՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 35**

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող միջոցների 2020 թվականի գույքագրման արդյունքների վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի կողմից կազմված ակտը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 36**

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Արաքսավան համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

- Վարչական բյուջեի 01.01.01.51 /կառավարման մարմնի պահպանում/ գործառական դասակարգման 4112 /պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ/ հոդվածից պակասեցնել 960 000 /ինը հարյուր վաթսուն հազար/ դրամ գումար և հատկացնել նույն գործառական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արաքսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արաքսավան, (093)935335, araksavanhamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 37

## ԱՐԱՔՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Համայնքի ղեկավարին, համայնքապետարանի համայնքային ծառայողներին, հարկահավաքին և օպերատորին տալ հավելավճար յուրաքանչյուրին իր ամսական աշխատավարձի 100 տոկոսի չափով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՍԱՆՅԱՆ ԲՐՈ

ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱ

ՕՀԱՆՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՏՈՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ